ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/118

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2025 թ. N 118

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Սպանդարյան 3
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2/երկու/ տարի ժամկետով, 14 հունիսի 2022 թ. N 66

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 1-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՎՁՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 2 փետրվարի 2024թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 7 մայիսի 2024թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 17-19-ը հունիսի 2024թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 18 հոկտեմբերի 2024թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 4 դեկտեմբերի 2024թ.

ՎՁՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմեն Հարությունյան՝** Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար։
- **Յասաման Ավագյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի անդամ։
- **Սուդարիկ Պետրոսյան՝** Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի Արհեստագործական ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ։
- **Անգելինա Տոնոյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ։

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով։ Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՎՁՏՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***ՎՁՏՊՔ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում կրթական ծրագրերը ձևավորված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա։ Գործում են դուալ կրթական ծրագրեր, որոնք ապահովում են տեսական և գործնական բաղադրիչների կապը։ ՄԿԾ-ներում ներառված են ընտրովի առարկաներ։ Կրթական ծրագրերի մշտադիտարկումն ու բարելավումը իրականացվում են, սակայն

անհրաժեշտություն կա դրանք համեմատելու նմանատիպ ուսումնական հաստատությունների ծրագրերի հետ:

Պրոֆեսորադասախոսական կազմը ներառում է համապատասխան որակավորում և մանկավարժական փորձ ունեցող դասախոսներ, ուսումնական վարպետներ, ինչպես նաև գործատուներ: Գործատուների ներգրավումը նպաստում է ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացմանը: Դասախոսական կազմի համալրումը իրականացվում է մրցույթային կարգով, առկա են երիտասարդ մասնագետներ: Սակայն անհրաժեշտություն կա դասավանդման մեթոդների բազմազանեցման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման:

Քոլեջն ունի համապատասխան ենթակառուցվածքներ և նյութատեխնիկական բազա: Պրակտիկաների ընթացքում ուսանողները օգտվում են գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից, իսկ գործատուները հնարավորություն ունեն ընտրելու ապագա աշխատակիցներ:

2. ***Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջի կառավարումն իրականացվում է թիմային ձևաչափով, որն ուղղված է տարածաշրջանի մասնագետների պատրաստումը: Քոլեջի ղեկավարությունը կարևորում է որակի ապահովման համակարգի դերը և աջակցում մարդկային ռեսուրսների զարգացմանը:

Միևնույն ժամանակ, կառավարման գործընթացը կրում է իրավիճակային բնույթ, և տվյալների հավաքագրման ու վերլուծության կայուն համակարգ առկա չէ: Ռազմավարական ծրագրերը լիարժեքորեն չեն ուղղորդում կառավարման օղակների գործունեությունը: Որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է, ուսանողների և արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակ է, գնահատման մեխանիզմները չեն ապահովում արդյունավետ վերլուծություն:

Քոլեջի կայուն զարգացման և բարելավման համար անհրաժեշտ է ամրապնդել ռազմավարական կառավարումը և որակի ապահովման համակարգի լիարժեք ներդրում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջը համագործակցում է տարածաշրջանի գործատուների հետ պրակտիկաների իրականացման և փորձի փոխանակման նպատակով, կազմակերպում է փորձի փոխանակում տեղական և միջազգային գործընկերների միջոցով: Սակայն միջազգայնացման գործընթացը պլանավորված չէ: ՄԿԾ-ների համեմատական ուսումնասիրություն այլ մասնագիտական հաստատությունների հետ չի իրականացվում:

Հետազոտական բաղադրիչը հազվադեպ է ներառվում ուսումնական գործընթացում: Հետազոտական աշխատանքների համար մեխանիզմներ չեն մշակվել:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՎՁՏՊՔ Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և

համապատասխան ժամանակացույց՝ առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը։

Հատուկ ուշադրություն դարձնել.

- գնահատման առանցքային ցուցանիշներով ռազմավարական կառավարման իրականացմանը,
- բոլոր կրթական ծրագրերի ներքին գնահատման կազմակերպմանը,
- որակի ապահովման համակարգի ուժեղացմանը. մեկ տարվա ընթացքում որակի ապահովման քաղաքականության հստակեցմանը, որը կապահովի որակի ապահովման կառույցի ինստիտուցիոնալ անկախությունը և որակի աշխատանքային պլանի մշակմանը,
- միջազգայնացման գործընթացների հստակ պլանավորմանը և համեմատական վերլուծությունների իրականացմանը,
- հետազոտական բաղադրիչի ինտեգրմանը բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերում, հետազոտական գործընթացների խրախուսմանը։

3. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները։ Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում։

4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՎՁՏՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների։

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մարտի 1